Միքայէլ իշխան . ○ Վրթանէս կաղնոյ եր-
Մանուէլ Գծագիր . ○ որդ Տանուտէր, ○
Գալստան կաղզվանոյ
չորրորդ Տանուտէր։ ○

ԳԼՈՒԽ ԾԲ.

Այլ եթէ գուցէ զի այժմ և կամ յապա ժամանակ ընդ ժամանակս ելցէ ոմն, և կամ ոմանք 'ի սերնդոց նախնոյ մերոյ Հայկայ, և կամ հաւատարմաց մերոց վաղարշակայ և բագրատայ ցանկանայցեն Նահապետութեան Հայաստանեաց անձամբ, և կամ որդէ որդի ժառանգութեամբ և երդմամբ խոստանայցէ պաշտել զԱստուած ըստ կերպին աւանդութեան Հայաստանեաց եկեղեցւոյ, հնազանդել Օրինաց, որ ելցէ 'ի տանէն և 'ի տանուտէրացէ հայոց և յանձն առնու 'ի վերայ իւր հատուցանել փնասն գործոց ձեռաց իւրոց ըստ Օրինաքն հայաստանեաց կալով մնալ զամենայն աւուրս կենաց իւրոց մի և նոյն զօրութեամբ որպէս գլուխ 51. յօրէնս նախարարութեան յայնժամ պարտ է մեզ սիրով ընդունիլ պատուիլ նմայ փառաք և պատուաք. և տալ նմայ նամակ պաշտօնի նախարարութեան որպէս 51 հատոր յօրէնս, նա ևս յաւելորդ որ նա ժառանգորդն կալով մնասցէ 'ի պաշտօնի նախարարութեան զամենայն աւուրս կենաց իւրոց և 'ի